«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2013

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի №595Ա (փոփոխվել է 2012 թվականի նոյեմբերի 7-ի №430Ա որոշմամբ) որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2012 թվականի ընթացքում իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2013 թվականի մայիսի 8-ի №ARG-01-14/1688 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

1. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային ծրագիրը

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2012 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2012 թվականի ընթացքում իրականացնել 3 779,5[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ ներդրումներ՝ 375,8 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 739,7 մլն դրամ
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 141,9 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 415,6 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 170,8 մլն դրամ,

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 443,0 մլն դրամ:
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 492,7 մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2012 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

ԳՐԱՖԻԿ 1



2. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2012 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2012 թվականի ընթացքում կատարել է 5 343,0 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 2 917,6 մլն դրամի հիմնական միջոցներ և ևս 1 945,5 մլն դրամի աշխատանքները ձևակերպվել են ընթացիկ ծախսերով: Մնացած 479,9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված (ավարտված) և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3	4	5	6	7
1	Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումներ	375,8	9,9%	112,1	2,3%	29,8%
2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	739,7	19,6%	379,6	7,8%	51,3%
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	141,9	3,8%	43,9	0,9%	31,0%
4	Գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	415,6	11,0%	505,6	10,4%	121,6%
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 170,8	31,0%	882,3	18,1%	75,4%
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	935,7	24,8%	994,1	20,4%	106,2%
7	Այլ ներդրումներ			1 945,5	40,0%	
10	**Ընդամենը**	**3 779,5**		**4 863,1**		**128,7%**

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

մլն դրամ

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր	Ընթացիկ ծախսեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	209,5	0,0	209,5
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	1 090,8	798,0	1 888,8
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	281,2	0,0	281,2
4	Մեփական ուժերով կատարված աշխատանքներից	1 816,0	1 147,5	2 963,5

4.1	*աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր*	*135,6*	*246,9*	*382,5*
4.2	*հումք և նյութեր*	*1 632,6*	*865,8*	*2 498,4*
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*12,6*	*0,0*	*12,6*
4.4	*այլ*	*35,1*	*34,8*	*70,0*
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**3 397,5**	**1 945,5**	**5 343,0**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2012 ընթացքում ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 5 343,0 մլն դրամի հիմնական միջոցներ, որից մոտ 63,6%-ը հանդիսանում է կապիտալացված և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 36,4%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների 35,3%-ն իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 55,5%-ը: Ներդրումների 3,9%-ը նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներն են և 5,3%-ի ներդրումներն ուղղվել են տեղակայում չպահանջող հիմնական միջոցների ձեռքբերմանը:

3. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսված ներդրումներ

2012 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 375,8 մլն դրամ գումար: Փաստացի ներդրվել է 488,3 մլն դրամի գումար, որից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 112,1 մլն դրամ: Մնացած 376,2 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղությամբ «Աբովյանի ԳՍՊԿ-ի լվացման պոմպակայանի էլեկտրատեխնիկական համակարգի վերականգնում», «Աբովյանի ԳՍՊԿՄ-ի լվացման պոմպակայան վերականգնում և ընդլայնում» և «Աբովյանի ԳՍՊԿ-ի N2 շլեյֆի մեկուսիչ ծածկույթի փոխարինում» աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նշված ենթառուղություններով կատարված ներդրումները համապատասխանաբար 6,4 մլն, 3,9 մլն և 3,7 մլն դրամով նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, «Աբովյանի ԳՍՊԿ-ի գազի սեպարացիոն հանգույցի վերակառուցում» աշխատանքի ուղղությամբ կատարված ներդրումը 0,5 մլն դրամով գերազանցել է ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը, ուստի նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 112,1 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 14,5 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 97,6 մլն դրամը:

3.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 739,7 մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազատարերի շինարարության, գազատարերի բացված հատվածների վերականգնման և ամրացման, չափիչ հանգույցների վերակառուցման, էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների կառուցման, ինչպես նաև էլեկտրապաշտպանիչ կայանների և գծային փականների տեղադրման ու վերազինման նպատակով և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ներդրումներ կատարել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և կառուցման ուղղությամբ:

Ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է 403,6 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են 379,6 մլն դրամի աշխատանքները: Մնացած 24,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղության «Միջակցման կառուցում Dy200մմ՝ Վանաձոր-Ալավերդի Dy700մմ և Վանաձոր-Ալավերդի Dy250մմ գազատարերի միջև» ենթառուղությամբ նախատեսվում էր ներդնել 45,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել է 62,3 մլն

դրամի ներդրում, որից 10,8 մլն դրամի կատարվել է D=273 մայրուղային գազատարի ապամոնտաժում: Նշված ենթաուղղությունից 2,3 մլն դրամը նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում և 14,9 մլն դրամը՝ ներդրումների համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Դեպի "Հրազդան-5" էներգաբլոկ կողմնատար գազատարի վրա մաքրման համակարգի կառուցում» ենթաուղղության «Հրազդան-5 տարածքում նուրբ մաքրման զտիչների հանգույցի տեղակայման ճնշակայում» և «Հրազդան 5 էներգաբլոկը սնող կողմնատար գազատարի կոնդենս-հավաքի տեղակայում» աշխատանքների ուղղությամբ կատարված ներդրումներից, 0,6 մլն դրամ և 1,5 մլն դրամ համապատասխանաբար նվազեցվել են սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

«Գազաբաշխիչ կայանների և այլ ինժեներական ենթակառուցվածքների շինարարություն, վերակառուցում և արդիականացում» ուղղության «Տեխնոլոգիական սարքավորումների և չափիչ գծերի փոխարինում ԳԲԿ-ում (ֆիլտրեր, ճնշման կարգավորիչներ, փականներ)» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 100,0 մլն դրամ 10 միավոր սարքավորումների և չափիչ գծերի փոխարինման նպատակով: Փաստացի իրականացվել են 63,6 մլն դրամի ներդրումներ, որից 10,9 մլն դրամի կատարվել է Հրազդանի Չ/Հ-ի վերակառուցման (ներառյալ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը), որը նախատեսված չէր ներդրումային ծրագրով և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, այս ուղղության սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցվել են նաև 24,8 մլն դրամի ներդրումներ:

«Չափիչ հանգույցների վերակառուցում (2012-ին՝ Այրում-2 և Սևան-2)» ենթաուղղության ուղղությամբ կատարված 130,7 մլն դրամից 15,1 մլն դրամ նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

«Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետ» ուղղությամբ 2012 թվականին ներդրումներ չեն կատարվել:

«Գծային փականների փոխարինում» ուղղության «Ղազախ-Երևան ԳՍՊԿ d=500 - 121 կմ (փականային հանգույցների փոխարինում)» աշխատանքի ուղղությամբ կատարված ներդրումներից 0,3 մլն դրամ նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

«Գազաբաշխիչ կայանների էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգի վերականգնում» ուղղությամբ նախատեսված էր կատարել 6,7 մլն դրամի ներդրումներ: Փաստացի 5,2 մլն դրամի կատարվել են 30 հատ ԳԲԿ-ների և 4 հատ Չ/Հ-ների հողանցման կոնտուրների վերականգնման աշխատանքներ:

«ԷՔՊ կայանների տեղակայում և արդիականացում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 4,0 մլն դրամ՝ 2 հատ դրենաժային ԷՔՊ կայանների կառուցման ուղղությամբ: Փաստացի ներդրվել է 7,2 մլն դրամ, որից 5,7 մլն դրամի ներկայացվել է Վայք-Եղեգնաձոր Dպ=300 Մալիշկա գյուղի մայրուղային գազատարի (կմ 7.4) կաթոդային ԷՔՊ կայանի վերականգնման և էլեկտրամատակարարման աշխատանքները (որից 2 458,1 մլն դրամի վերականգնման աշխատանքներն իրականացվել են 2008 թվականին, իսկ 3,2 մլն դրամի էլեկտրամատակարարման աշխատանքները՝ 2012 թվականին) նվազեցվել է նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

Ստորև՝ աղյուսակ 3-ում, ներկայացված է գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությունից նվազեցված ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների `

Աղյուսակ 3
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում	0,0	14,9	4,5	19,4
2	Գազաբաշխիչ կայանների և այլ ինժեներական ենթակառուցվածքների շինարարություն, վերակառուցում և արդիականացում	10,9	0,0	40,0	50,8
3	Գծային փականների փոխարինում	0,0	0,0	0,3	0,3
4	ԷՔՊ կայանների տեղակայում և արդիականացում	5,7	0,0	0,0	5,7
5	**Ընդամենը**	**16,6**	**14,9**	**44,7**	**76,2**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 379,6 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 76,2 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 303,4 մլն դրամը:

3.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգեր՝ իրենց շանթապաշտպանիչ համակարգերով, ջերմաստիճանի և ճնշման տվիչների կարգաբերիչներ՝ իրենց օժանդակ սարքավորումներով, Չ/Հ-ներում և ԳԲԿ-ներում օպերատորների աշխատասենյակներ կառուցել, ինչպես նաև նախատեսվում էր իրականացնել միջոցառումներ գազափոխադրման համակարգի կապի բարելավման ուղղությամբ (ընկերության միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում) և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 141,9 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 43,9 մլն դրամի գումար, որի արդյունքում միևնույն գումարի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում ներառված են 7 հատ միկրոպրոցեսորային ծախսաչափեր իրենց հանգույցներով (10,1 մլն դրամ), որոնք ձեռք են բերվել նախորդ ժամանակաշրջանում և 10 հատ մարտկոց (1,1 մլն դրամ), որոնք համաձայնեցված չեն: Ընկերության նախորդ տարվա հաշվետվության վերլուծության արդյունքում պարզվել էր, որ 2011 թվականին ձեռք էին բերվել 19 հատ միկրոպրոցեսորային ծախսաչափեր իրենց հանգույցներով (համաձայնեցված էր 2011 թվականի ներդրումային ծրագրով), որոնք ամբողջությամբ հանձնվել էին շահագործման: Ուստի, նշված 11,2 մլն դրամ ծավալը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում» և **«Կապի համակարգի արդիականացում»** ուղղություններով 2012 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Շենքերի և շինությունների կառուցում, վերակառուցում և վերականգնում» ուղղությամբ, բացի համաձայնեցված աշխատանքները, ներկայացվել է նաև 10,0 մլն դրամ՝ բնական գազի ներկրման լիցենզիայի համար, որը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Ստորև՝ աղյուսակ 4-ում, ներկայացված է գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 4
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը
1	Հաշվառման համակարգի արդիականացում	11,2
2	Շենքերի և շինությունների կառուցում, վերակառուցում և վերականգնում	10,0
3	**Ընդամենը**	**21,2**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 43,9 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 21,2 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 22,7 մլն դրամը:

3.4. Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2012 թվականին նախատեսվում էր իրականացնել 415,6 մլն դրամի ներդրումներ, որից 40,6 մլն դրամը գազաբաշխման ցանցի ընդլայնման, իսկ 375,0 մլն դրամը նոր բաժանորդների միացման նպատակով: Նախատեսվում էր ավարտել նախկինում սկսված, սակայն անավարտ գազատարերի շինարարությունը և գազաբաշխման ցանցին միացնել 13 000 նոր բաժանորդներ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է 519,6 մլն դրամ: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են 78,3 մլն դրամի գազատարերի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների համար տեղակայվել են 427,3 մլն դրամի հաշվառման համալիրներ: Մնացած 14,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

2012 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել 12 840[2] նոր բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 638 551:

«Գազի կենցաղային հաշվիչների և արկղերի ձեռքբերում և տեղադրում» ուղղությամբ նախատեսված 13 000 գազահաշվիչների (իրենց արկղերով) փոխարեն տեղադրվել են 15 214 հատ: Հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է,

[2] 2012 թվականի ընթացքում միացված բաժանորդների քանակի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ընդհանուր բաժանորդների քանակի մասին տեղեկատվությունը ստացվել է ընկերության պաշտոնական ոստ-կայքից:

որ համաձայնեցված և փաստացի տեղադրված գազահաշվիչների (իրենց արկղերով) տարբերությունը՝ 2 374 հատը՝ 65,7 մլն դրամ ծավալով, իրենցից ներկայացնում են նախկինում տեղադրված արկղերի փոխարինման աշխատանքներ, որը նախատեսված չէ ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Գազաբաշխման համակարգի ընդլայնում» ուղղության մեջ 37,2 մլն դրամ ընդհանուր ծավալով ներկայացվել են գոյություն ունեցող գազատարերի փոխարինման աշխատանքներ, որոնք համաձայնեցված են ներդրումային ծրագրի «Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերատեղադրում» ուղղությամբ: Նշված ծավալից (37,2 մլն դրամ) «Հարավ-Արևմտյան Ա-2 թաղ. միջին և ցածր ճնշման պոլիէթիլենային d=160 գազատարի կառուցում» (1,8 մլն դրամ), «ք.Երևան, Ջրվեժ խճուղի 1 հասցեում Արմֆլոու տիպի ծախսաչափը սնող d=108, d=15 գազատարի կառուցում» (2,3 մլն դրամ), «ք.Գյումրի, Ռուսթավելի-Ղուկասյան-ՊԳԿԿ 14-45 ցածր ճնշման d=373 գազատարի կառուցում» (6,1 մլն դրամ) և «Երևան Թումանյանից մինչև Պուշկին միջին ճնշման գազատարի կառուցման նախնական աշխատանքներ d=57*3մմ, d=89*3.5մմ, d=108*4մմ, d=159*5մմ» (26,1) աշխատանքներից սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցվել է 11,0 մլն դրամ:

Ստորև՝ աղյուսակ 5-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի ընդլայնման և նոր բաժանորդների միացման ուղղությունից նվազեցված ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 5
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Գազի կենցաղային հաշվիչների և արկղերի ձեռքբերում և տեղադրում	65,7	0,0	65,7
2	Գազաբաշխման համակարգի ընդլայնում	0,0	11,0	11,0
3	**Ընդամենը**	**65,7**	**11,0**	**76,6**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 505,6 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 76,6 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 428,9 մլն դրամը:

3.5. Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր իրականացնել գազատարերի վերականգնման և վերատեղադրման, էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների տեղակայման և այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ներդրումներ կատարել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և կառուցման ուղղությամբ: Նշված ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 170,8 մլն դրամ: Ընկերությունն իրականացրել է 945,6 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են 882,3 մլն դրամի աշխատանքներ: Մնացած 63,3 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Նշված ուղղության **«Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերատեղադրում»** ուղղությամբ կատարվել է 722,6 մլն դրամի ներդրում: Նշված ծավալում 0,9 մլն դրամը իրենից ներկայացնում է նախագծերի արժեքը, որոնց ուղղությամբ աշխատանքները դեռևս չեն ավարտվել, ուստի նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, այս ուղղությամբ 23,4 մլն դրամ նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

«Էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ուղղությամբ 1,1 մլն դրամ արժեքով ձեռք են բերվել տրանսֆորմատոր 150/50 (35/6 կՎ) և 6,3 մլն դրամի տաքացման վառարաններ, որոնք նախատեսված չէին ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետ» ուղղությամբ 2,6 մլն դրամ ծավալով կատարվել է Մարտունու ԳԲԿ-ի տեղափոխում, որը համաձայնեցված չէր ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Ստորև՝ աղյուսակ 6-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությունից նվազեցված ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 6
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերատեղադրում	0,9	23,4	24,4
2	Էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում	7,4	0,0	7,4
3	Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետ	2,6	0,0	2,6
4	**Ընդամենը**	**11,0**	**23,4**	**34,4**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 882,3 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 34,4 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 847,9 մլն դրամը:

3.6. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտում ներդրումներ պետք է իրականացվեին հետևյալ ուղղություններով՝

- հաշվառման համակարգի արդիականացում,
- գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում,
- գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի և հատուկ սարքավորումների ձեռքբերում,
- վթարային ծառայության սարքավորումների ձեռքբերում,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերասարքավորում,
- շենքերի և շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում,

- քաղաքացիական պաշտպանության օբյեկտների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերում:

2012 թվականի ընթացքում «**Հաշվառման համակարգի արդիականացում»** ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 231,2 մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են 115,3 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 114,9 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 0,4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղության մեջ ներառվել են 9,2 մլն դրամի Փարաքար և Թաիրով գյուղերում չափիչ հանգույցի տեղադրման աշխատանքներ, որոնք համաձայնեցված չէին ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Նշված ուղղության **«Բնական գազի գլխամասային հաշվիչների տեղակայում»** ենթաուղղությամբ նախատեսվում էր տեղակայել 300 հատ գազի գլխամասային հաշվիչներ 195,8 մլն ընդհանուր ծավալով: Փաստացի ներդրվել է 104,2 մլն դրամ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 103,8 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 0,4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Շահագործման հանձնված հիմնական միջոցների ուղղությամբ կատարված ներդրումների ծավալում կատարվել են 7,1 մլն դրամ ծավալով մետաղական արկղերի ու ճնշման կարգավորիչների տեղադրման, հաշվիչ հանգույցների վերատեղադրման աշխատանքներ և 15,1 մլն դրամ ծավալով ձեռք են բերվել 4 հատ ԲԱ-200/2 տիպի բաշխիչ աշտարակներ, որոնք նախատեսված չէին ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների» ներդրման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 488,1 մլն դրամի ներդրումներ, որից 443,0 մլն դրամը՝ սպառողների մոտ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման նպատակով և 45,1 մլն դրամը տարբեր սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով: Ընկերությունը 2012 թվականի ընթացքում այս ուղղությամբ իրականացրել է 517,3 մլն դրամի ներդրումներ (ամբողջն ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների ձեռք բերման և տեղադրման ուղղությամբ), որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Շահագործման հանձնված հիմնական միջոցների ուղղությամբ կատարված ներդրումների ծավալում 77,6 մլն դրամի իրականացվել են նախկինում տեղադրված ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների փոխարինում, որը նախապես համաձայնեցված չէր և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 1,3 մլն դրամ ծավալով ներկայացվել է նաև ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների տեղադրման ժամանակ օգտագործված գործիքների մաշվածության, 0,3 մլն դրամի՝ այդ գործիքների վերանորոգման և 0,3 մլն դրամի տարբեր փաստաթղթերի տպագրության և բազմացման ծախսեր, որոնք ևս նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ նշված գործիքներն իրենց ձեռքբերման ժամանակ ամբողջ արժեքով արդեն իսկ ներառվել են սակագնի մեջ, իսկ դրանց վերանորոգման և փաստաթղթերի տպագրության և բազմացման ծախսերը բնույթով ընթացիկ են և չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրերի տարրեր:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 14,0 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 36,5 մլն դրամ, որի արդյունքում ձեռք բերված հիմնական միջոցներն ողջ ծավալով հանձնվել են շահագործման: Շահագործման հանձնված հիմնական միջոցների ուղղությամբ կատարված ներդրումների ծավալում 6,1 մլն դրամի ձեռք են բերվել ներդրումային ծրագրով չնախատեսված սարքավորումներ և գույք, իսկ մնացած 16,4 մլն դրամը գերազանցում է նախապես համաձայնեցված ծավալը: Նշված գումարները նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 20,0 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 56,6 մլն դրամ, որի արդյունքում ձեռք բերված հիմնական միջոցներն ողջ ծավալով հանձնվել են շահագործման: Նշված ծավալում (56,6 մլն) 3,5 մլն դրամի ձեռք են բերվել համակարգչային ծրագրեր, որոնք նախապես համաձայնեցված չէին և 20,0 մլն դրամի գազամատակարարման համակարգի օպերատորի և բաշխման լիցենզիաների համար կատարված վճարումներ, որոնք նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Բացի այդ, 13,2 մլն դրամ նվազեցվել է սակագնով

փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Հատուկ (մասնագիտացված) սարքավորումների ձեռքբերում» ուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել 6,1 մլն դրամի սարքավորումներ: Փաստացի ձեռք են բերվել 17,2 մլն դրամի սարքավորումներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման: Նշված ծավալից 11,1 մլն դրամ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Վթարային ծառայության համար սարքավորումների ձեռքբերում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 4,3 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել 5,2 մլն դրամի սարքավորումներ: Նշված ծավալում 2,5 մլն դրամի 1 հատ եռակցման ագրեգատը (ներառյալ շասսին) ձեռք է բերվել նախորդ ժամանակաշրջանում (2008 թվականին), որտեղ նախատեսված չի եղել, իսկ 1,5 մլն դրամի ձեռք են բերվել այլ սարքավորումներ, որոնք նախատեսված չէին ներդրումային ծրագրով, ուստի ամբողջ ծավալով (4,0 մլն դրամ) նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Մեքենա-մեխանիզմների ձեռք բերում և վերասարքավորում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 108,1 մլն դրամ: Ընկերությունը 2012 թվականի ընթացքում ներդրել է 148,1 մլն դրամ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 146,2 մլն դրամի հիմնական միջոցներ: Շահագործման հանձնված հիմնական միջոցների ուղղությամբ կատարված ներդրումների ծավալում ձեռք են բերվել 127,6 մլն դրամի մեքենա-մեխանիզմներ և ավարտվել են 18,6 մլն դրամի մեքենաների վերասարքավորման աշխատանքներ:

Նշված ուղղության **«Օպերատիվ մեքենա»** ենթաուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել 5 հատ օպերատիվ թեթև մարդատար մեքենա՝ 22,5 մլն դրամ ծավալով և 2 հատ միկրոավտոբուս՝ 26,0 մլն դրամ ծավալով: Փաստացի ձեռք են բերվել 8 հատ մեքենա՝ 64,6 մլն դրամ ծավալով, որից 3 հատը՝ 32,8 մլն դրամ ծավալով վարչական ապարատի համար ձեռքբերված մեքենաներն են, որոնք նախապես համաձայնեցված չլինելու պատճառով նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա

ներդրումների ծավալից, ևս 4,5 մլն դրամ նվազեցվել է համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով[3]:

«Վթարային մեքենա» ենթառաղությամբ նախատեսվում էր ձեռք բերել 11 հատ վթարային մեքենա՝ 42,6 մլն դրամ ծավալով: Փաստացի ձեռք են բերվել 12 հատ մեքենա՝ 50,0 մլն դրամ ծավալով: 1 մեքենա՝ 5,6 մլն դրամ արժեքով ձեռք է բերվել 2011 թվականին (համաձայնեցված էր ընկերության 2011-2013թթ ներդրումային ծրագրով), սակայն շահագործման է հանձնվել 2012 թվականին: Այս ենթառաղությամբ 1,8 մլն դրամ նվազեցվել է համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«ԷՔՊ կայանների տեխսպասարկման համար մարդատար ավտոմեքենաների ձեռքբերում» ենթառաղությամբ նախատեսվում էր ձեռք բերել 2 հատ մարդատար մեքենա՝ 9,0 մլն դրամ ծավալով: Փաստացի ձեռք են բերվել 2 հատ մեքենա՝ 13,0 մլն դրամ ծավալով, որից 2,2 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Ավտոմեքենաների վերասարքավորում» ենթառաղությամբ նախատեսվում էր 8 մլն դրամ ծավալով իրականացնել 20 հատ ավտոմեքենաների վերասարքավորում: Փաստացի ներդրվել է 18,6 մլն դրամ, որից 10,5 մլն դրամի կատարվել են 26 հատ մեքենաների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ և 0,6 մլն դրամի իրականացվել է Նիսան Արմադա մեքենայի գազաբալոնային սարքավորումների տեղակայում, որոնք նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, որովհետև մեքենաների վերանորոգման ծախսերն արդեն ներառված են սակագնի ծախսային հոդվածներում, իսկ վարչական ապարատի մեքենաների վերասարքավորումը ներդրումային ծրագրով համաձայնեցված չէ:

Բացի այդ, սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերությունը մեքենաների վերասարքավորումն (գազաբալոնային սարքավորումների տեղադրում) իրականացնում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին պատկանող «Ավտոգազ» ՍՊԸ-ում, որտեղ մեքենաների վերասարքավորման

[3] Ընկերության 2012 թվականի ներդրումային ծրագրով մեքենաների համաձայնեցված ծավալը ներկայացված է առանց ավելացված արժեքի հարկի: Սակայն, հաշվի առնելով «Ավելացված Արժեքի Հարկի» մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետը՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ուղղությամբ փաստացի կատարված ներդրումների ծավալում ներառվում է նաև ավելացված արժեքի հարկը և, համապատասխանաբար, այդ մասով, գերազանցումը չի նվազեցվում:

արժեքը միջինում տատանվում է 425.0-600,0 հազար դրամ՝ կախված գազաբալոնի ծավալից: Շուկայական գների ուսումնասիության արդյունքում պարզվեց, որ նշված արժեքները զգալիորեն գերազանցում են նմանատիպ աշխատանքների գործող շուկայական արժեքը: Օրինակ, համաձայն ընկերության ներկայացված փաստաթղթերի՝ Շեվրոլե-Նիվա մակնիշի մեքենան «Ավտոգազ» ՍՊԸ-ում 70լ (14խմ) տարողությամբ գազաբալոնով վերասարքավորելու արժեքը կազմել է 575,0 հազար դրամ (առանց ԱԱՀ), այն ժամանակ, երբ միևնույն տարողությամբ գազաբալոնը արդի սարքավորումներով տեղադրելու գործող շուկայական արժեքը տատանվում է 320,0-340,0 հազար դրամի սահմաններում (առանց ԱԱՀ): Հաշվի առնելով վերը նշվածը՝ ավտոմեքենաների վերասարքավորման ուղղությամբ իրականացված ներդրումների ընդունելի ծավալը նվազեցվել է 40,35%-ով՝ 3,0 մլն դրամ:

Բացի վերը նշվածը՝ այս ուղղությամբ 0,4 մլն դրամ նվազեցվել և նաև սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

2012 թվականի ներդրումային ծրագրով **«Շենքերի և շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում»** ուղղությամբ նախատեսված էր իրականացնել 26,2 մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են 92,3 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են: Ներդրումային ծրագրով նախատեսվում էր իրականացնել 10 հատ վարչական շենքերի և ԳԿԿ շենքերի վերականգնում՝ 25,0 մլն դրամի և 1 հատ ֆիզ-քիմիական լաբորատորիայի վերականգնում 1,2 մլն դրամ ծավալով: Փաստացի իրականացված աշխատանքների ծավալից 3,9 մլն դրամի իրականացվել է «Հրազդան 5 Էներգաբլոկի ՉՀ օպերատորի աշխատասենյակի կառուցում, բարեկարգում» աշխատանքը, որը նախատեսված չէր ներդրումային ծրագրով և նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Այս ուղղությամբ ներկայացվել են «Վայոց ձոր, Աղավնաձորի ԳԲԿ-օպերատորի աշխատասենյակի կառուցում» (1 954,4 մլն) և «Ջորաղբյուրի ԳԲԿ օպերատորի տուն (աշխատասենյակի կառուցում)» (4 995,9 մլն) աշխատանքները, որոնք համաձայնեցված են ներդրումային ծրագրի գազափոխադրման համակարգի շենքերի և շինությունների վերականգնման ուղղությամբ:

«Զորաղբյուրի ԳԲԿ օպերատորի տուն (աշխատասենյակի կառուցում)» աշխատանքի սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 1,6 մլն դրամ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղության մեջ ձեռք են բերվել նաև 73,1 մլն դրամի հողամասեր, որոնք ևս նախապես համաձայնեցված չէին և նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում» ուղղությամբ 2012 թվականին նախատեսվում էր իրականացնել 37,8 մլն դրամի ներդրումներ բարձր զգայունության գազափնտրիչ սարքերի և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 7,8 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են: Նշված ուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել հակագազ, դիզելային գեներատոր, խմելու ջրի պահեստավորման տարաներ և սան թողարկիչ: Փաստացի ձեռք է բերվել 2,4 մլն դրամի ացետիլենային գեներատորներ և 1 հատ մարտկոց և 4,7 մլն դրամի պոմպակայան, որոնք նախատեսված չեն ներդրումային ծրագրով, ուստի նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Ստորև՝ աղյուսակ 7-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 7
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Հաշվառման համակարգի արդիականացում	31,4	0,0	0,0	31,4
2	ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	79,5	0,0	0,0	79,5
3	Գրասենյակային գույքի ձեռքբերում	6,1	16,4	0,0	22,5
4	Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում	23,5	13,2	0,0	36,7
5	Հատուկ (մասնագիտական) սարքավորումների ձեռքբերում	0,0	11,1	0,0	11,1

6	Վթարային ծառայության համար սարքավորումների ձեռքբերում	4,0	0,0	0,0	4,0
7	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	44,0	8,5	3,4	55,9
8	Շենքերի և շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում	77,0	0,0	1,6	78,6
9	Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում	7,1	0,0	0,0	7,1
10	**Ընդամենը**	**272,5**	**49,1**	**5,0**	**326,6**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 994,1 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 326,6 մլն դրամ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 667,4 մլն դրամը:

3.7. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները՝ 1 945,5 մլն դրամը, իրենցից ներկայացնում են գազատարերի և գազահաշվիչների, թվով 441 միավոր ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի, տարբեր սարքերի և սարքավորումների և այլ հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսեր: Նշված ծախսերը ներառված չեն ներդրումային ծրագրում և իրենց բնույթով չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրեի տարրեր, ուստի ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ամփոփ ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վեր-լուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

մլն դրամ

1	**2012 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ**	**5 343,0**
2	**2012 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը**	**479,9**
3	**2012 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ**	**4 863,1**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**2 495,1**
4.1	***Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում՝***	**386,9**
4,1,1	Գազափոխադրման համակարգի վերակառուցում	16,6
4,1,2	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	21,2
4,1,3	Գազաբաշխման համակարգի ընդլայնում	65,7
4,1,4	Գազաբաշխման համակարգի վերակառուցում	11,0
4,1,5	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	272,5
4.2	***Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ***	**64,5**
4.3	***Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված ներդրումներ***	**98,1**
4.4	***Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ***	**1 945,5**
5	***2012 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը***	**2 368,0**